

Մահ Բալտովիների և յաջորդութիւնն Բալտովիների Ե . և Գուխտնի : Գործ Սարահատարների : Պատերազմն Տիբերիոյ . Պարտութիւն խաչակրաց : Գեթութիւն թագաւորին և խաչակրացին Քրիստոսի :

**ԲԱՆՏՈՎԻՆ Դ .** յետ դնելոյ դաշինս ընդ Սալահատարինի եւ կնքելոյ զհաշտութիւնն անկաւ յախա գողութեան , և յանձն արար զխնամս թագաւորութեանն քնսորդւոյ իւրոյ : Բալտովին առեալ էր զքոյր իւր Սիրիլա , զայրիացեալն յառաջին յառնէ իւրմէ 'ի Գուլիէլմոսէ երկայնատուր անուանելոյ , 'ի կնութիւն Գուխտնի Լուսինեան : Մեծամեծք տէրութեանն նախանձնելով ընդ այս ընտրութիւն , անկաւ 'ի նոսա երկպառակութիւն : Ի մեռանել Բալտովիների Դ . ( 1185 ) , յաջորդեաց նա քնսորդի իւր Բալտովին Ե . որդի Սիրիլայ և Գուլիէլմոսի , ծաղկահասակ թագաւորն , որ հազիւ էր ամաց ութից , մեռաւ . ( 1186 ) սաստիկ հիւանդութեամբ . մայր իւր Սիրիլա ետ զթագաւորութիւնն Գուխտնի Լուսինեան՝ երկրորդ առնն : Կոմսն Տրապոլսոյ մատնեաց զնորապսակ թագաւորն , որ անկաւ 'ի ձեռս Սալահատարինի 'ի սլատերազմին Տիբերիոյ , զորոց ունիմք արդ ասել 'ի ստորեւ :

Մինչդեռ Սալահատարին կայր սլարապեալ 'ի գործ շինութեան յնգիստոս , մեռան թագաւորքն Մուսուլայ և Բերիոյ . անկաւ երկպառակութիւն 'ի մէջ ժառանգաց նոցին եւ լուծին զգաշն : Հարկ եղեւ Սալահատարինի զէն առնուլ ընդդէմ նոցա . զի Սէյֆէտարին և Սուլթան Սալէհ որս ունէին զնմանէ , և 'ի սլահու մահուան իւրեանց մին զերկոսին որդիս իւր , և միւսն զորդի հօրեղբոր իւրոյ զրկեալ 'ի ժառանգութենէ գահաժառանգ կացուցին Իզլէտարին Մա'սուտն , կարծելով թէ նա կարող է հանել զքէն վրիժուց իւրեանց 'ի Սալահատարինէ : Ի հասանիլ նորա իշխանութեան՝ մեծագումար սլատերազմական ծախիւք միարանեցան ընդ թագաւորին Երուսղէմի , եւ 'ի միասին արշաւեցին յերկիր տէրութեան Սալահատարինի : Տրամեցաւ Սուլթանն ընդ այս , զի փոխանակ բարեացն՝